ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

www.src.am

ԻՆՉ Է ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՎ

Կառավարության որոշմամբ ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման համար Հայաստանի Հանրապետություն ժամանակավոր ներմուծված՝ ԱՏԳ ԱԱ 8703 ապրանքային դիրքին դասվող թեթև մարդատար տրանսպորտային միջոցների ազատ շրջանառության համար ներմուծման դեպքում քաղաքացիները կարող են օգտվել պետական աջակցության ծրագրից:

ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ՕԳՏՎԵԼ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ

Միասնական դրույքաչափով վճարվող մաքսատուրքերի և հարկերի մասնակի փոխհատուցում կարող են ստանալ ՀՀ կամ ԵԱՏՄ այլ երկրների այն քաղաքացիները, որոնք մինչև 2023 թվականի դեկտեմբերի 4-ը ներառյալ ժամանակավոր ներմուծման նպատակով երրորդ երկրներից ներմուծել են թեթև մարդատար տրանսպորտային միջոց և դեկտեմբերի 5-ից դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում դրանք կմաքսազերծեն Հայաստանում:

ՈՐՔԱՆ Է ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԸ

Մինչև 5 տարի թողարկման տարեթիվ ունեցող ավտոմեքենաների մասով փոխհատուցվում է վճարման ենթակա գումարի 40%-ը, այսինքն՝ շահառուն վճարում է 60%-ը, իսկ պետությունը փոխհատուցում է մնացած 40%-ը:

5 տարուց ավելի թողարկման տարեթիվ ունեցող ավտոմեքենաների մասով փոխհատուցվում է վճարման ենթակա գումարի 70%-ը, այսինքն՝ շահառուն վճարում է 30%-ը, իսկ պետությունը փոխհատուցում է գումարի մնացած 70%-ը:

ԻՆՉՊԵՍ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՄԱՔՍԱՁԵՐԾՈՒՄԸ

Մաքսային ձևակերպումներն իրականացնելու համար 2023 թվականի դեկտեմբերի 5-ից սկսած շահառուները կարող են այցելել Հյուսիսային մաքսատուն-վարչություն (ք. Գյումրի, Խրիմյան Հայրիկ փողոց, 2/14):

Շահառուն պետք է մաքսատուն ներակայանա անձամբ՝ անձը հաստատող փաստաթղթով, ներկայացնի ժամանակավորապես ներմուծված տրանսպորտային միջոցը, վերջինիս տեխնիկական անձնագիրը, ժամանակավոր ներմուծման ժամանակ կազմված մաքսային մուտքի օրդերը և առկայության դեպքում՝ տրանսպորտային միջոցին վերաբերելի այլ առկա փաստաթղթերը: